Հրաչիկ Վարդանյան

ՏԵՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՍՓՅՈՒՌՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

«Ժամանակակից սփյուռքները, ինչպես այսօրվա մյուս բոլոր հասարակությունները և սոցիալական ձևավորումները, ավելի շատ ցանցային, քան կենտրոն-ծայրամասային հասարակություններ են. նրանք մերժում են հիերարխիան, սակայն դրական են արձագանքում լավ առաջնորդությանը»:
Խաչիկ Թեոլեոլյան

Բանալի բառեր. սփյուռք, քաղաքական դերակատարություն, պետականազուրկ սփյուռք, ռազմավարական և տնտեսական նպատակներ, հայրենիք, ընդունող երկիր, համաշխարհայնացում:

Արդի սփյուռքագիտական հետազոտություններում հաճախ է ընդգծվում այն միտքը, որ սփյուռքը ոչ միայն պարզապես ծագման երկրից դուրս բնակվող ժողովրդի այն հատվածն է, որը պահպանել է էթնիկական հատկանիշները, հոգևոր, մշակութային ինքնությունը կամ ստեղծել նոր հիբրիդային ինքնություններ, ձգտում է չխզել կապը հայրենի պետության, կամ աշխարհագրական այն տարածքի հետ, որը համարում է իր հայրենիքը, այլև, որ առավել հատկանշական է, այն անդրազգային ցանցն է, որն օժտված է մշակութային, սոցիալական, հասարակական, տնտեսական, ինչպես նաև քաղաքական հսկա ներուժով:

Այսօր սփյուռքները ազդեցություն են ունենում միջազգային և պետական համակարգերի վրա, ավելին՝ մարտահրավեր են նետում քաղաքականության վերաբերյալ ավանդական այն մոտեցումներին, որոնք հենվում են պետություն-պետություն երկկողմ հարաբերությունների, միջկառավարական կազմակերպությունների, միջազգային հասարակական կազմակերպությունների վրա: Ժամանակակից շատ սփյուռքներ հայրենիքից պահանջում են ճանաչել իրենց՝ որպես հավասարազոր կարևորությամբ սուբյեկտի, որի ազդեցությունից կախված է երկրի դիրքը միջազգային հարթակում[1]:

Սփյուռքների քաղաքական դերակատարության լավագույն ուսումնասիրողներից Գ. Շեֆֆերը գրում է. «Այժմ … լայնորեն ընդունելի է, որ ազգային, տարածաշրջանային կամ գլոբալ արդի քաղաքականության որևէ լուրջ քննարկում չի կարող անտեսել այս երևույթներին (սփյուռքներին- Հ. Վ.) և նրանց տարբեր դերակատարությունները»[2]:

Սփյուռքը՝ որպես քաղաքական գործոն, քննարկելի է մի կողմից ընդունող երկրի հետ, հայրենիքի և այլ երկրներում գտնվող հայրենակիցների համայնքների հետ հարաբերությունների, մյուս կողմից՝ ընդունող երկրի և հայրենիքի հարաբերություններում ունեցող դերակատարության տեսանկյունից: Քննելով և արձանագրելով այդ մակարդակում սփյուռքների ունեցած նշանակությունը, հաշվի առնելով համաշխարհայնացման (globalization) և անդրազգայնացման (transnationalization) արդի գործընթացները և այն, որ սփյուռքները, հաճախ միտում են ցուցաբերում գործելու իբրև անկախ դերակատարներ՝ առաջ է քաշվում մյուս կարևոր հարցադրումը. արդյոք սփյուռքները հետարդիական (postmodern), հետազգային (postnational), անդրպետական (trans-state) սոցիալական և քաղաքական համակարգի ձևավորման նախակարապետներն են: Ստորև կանդրադառնանք սփյուռքների քաղաքական դերակատարության շուրջ հետազոտողների կողմից արված որոշ տեսական ընդհանրացումների:

Պատճառները և հանգամանքները, որոնք նախորդ մի քանի տասնամյակների ընթացքում սփյուռք երևույթը, որը զուգորդվում էր տեղահանության, կորստի, պետա-

[1] Полоскова Т., Современные диаспоры (внутриполитические и международные аспекты), М., 2002, с. 199.
[2] Scheffer G., Diaspora Politics: At Home Abroad. Cambridge: Cambridge University Press, 2003, p. ix:

կանազրկության և տկարության հետ, դարձրին ազդեցիկ իրողություն, իսկ «սփյուռքյան կերպարը»՝ գրավիչ, բազմազան են[1]: Ընդունող երկրներում իրականացվող բազմամշակութային (multicultural) քաղաքականությունը վերակենդանացրել է ներգաղթյալների կամ նրանց սերունդների էթնիկ հպարտությունը և ինքնավստահությունը, կարևոր են նաև ներգաղթյալների քանակի աճին զուգընթաց տնտեսական ռեսուրսների աճը և, առհասարակ, աշխարհի քաղաքական համակարգում այն խոշոր փոփոխությունները, որոնք տեղի ունեցան Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ սկսեցին գոյություն ունենալ նոր ազգային պետություններ[2]: Նորագույն տեխնոլոգիաները, գլոբալ մեդիան, հաղորդակցությունը ժողովուրդների ցրված հատվածներին թույլ են տալիս անդրազգային քաղաքականությամբ զբաղվելու *ճիշտ ժամանակին*: Սփյուռքյան ցանցերը, որոնք միավորում են պարբեր պետություններում գտնվող համայնքներին, կարող են օգտագործվել ռեսուրսների, հմտությունների, գաղափարների անդրսահմանային փոխանցումները խթանելու համար[3]:

Առհասարակ, սփյուռք երևույթը դիտարկվում է և՛ իբրև իրական սոցիալական կառույց[4], և՛ վերնախավային քաղաքական ծրագիր, սոցիալական շինվածք՝ համաձայն ազգայնականության վերաբերյալ Բ. Անդերսոնի հայտնի տեսության[5]: Մենք համակարծիք ենք Գ. Շեֆֆերի այն մոտեցմանը, որ սփյուռքյան ինքնությունը ներառում է պրիմորդիալ, ինստրումենտալ և հոգեբանական-սիմվոլիկ տարրեր[6]: Թե ինչու են սփյուռքները ստեղծում կազմակերպություններ, ընդունող երկրի հասարակության և կառավարության, հայրենիքի, գլոբալ և տարածաշրջանային դերակատարների, այլ երկրներում գտնվող իրենց հայրենակիցների հետ հարաբերությունները սնելու համար ներդնում զգալի ջանքեր և ռեսուրսներ, ունի երկու հիմնական պատճառ: Առաջին՝ նպաստել ընդունող երկրում իրենց համայնքի բարեկեցությանը և ապահովել նրա շարունակական գոյությունը. երկրորդ՝ մեծացնել հայրենիքին և այլ երկրներում գտնվող իրենց հայրենակիցների համայնքներին աջակցելու կարողությունը[7]:

Տեսականորեն, սփյուռքները մարտահրավեր են նետում հավատարմության և քաղաքացիության պետական ինստիտուտներին՝ գտնվելով ներքին և միջազգային քաղաքականության խաչմերուկում: Ամենից առաջ, նրանք համարվում են ինքնություն ձևավորող ուժ: Որպես ավանդական սահմաններին մարտահրավեր նետողներ, մշակույթների անդրազգային փոխադրողներ և ապատեղայնացված (deterritorialized) համայնքների դրսևորում, սփյուռքները սահմանվում են իբրև ազգային պետության «հարացու-

---

[1] Սփյուռքի տեսաբան Խաչիկ Թեոլեոլյանը հանգամանորեն վերլուծել է նյութական, ժողովրդագրական, վարչական, ինչպես նաև դիսկուրսային և գաղափարախոսական այդ գործոնները, որին անդրադարձել ենք մեկ այլ հոդվածում: Տե՛ս Վարդանյան Հ., Սփյուռքի սահմանումը և եզրույթի իմաստային ընդլայնման պատճառները ըստ Խաչիկ Թեոլեոլյանի, ԵՊՀ «Հայագիտության հարցեր» հանդես, 2016 թ., 2(8): Տե՛ս նաև Tölölyan Kh., Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment, Diaspora, 1996, 5 (1):

[2] Տե՛ս Vertovec S., The Political Importance of Diasporas, Centre on Migration, Policy and Society, Working Paper No. 13, University of Oxford, 2005, pp. 1-11.

[3] Adamson F., The Growing Importance of Diaspora Politics, Current history (New York, N.Y.: 1941) · Nov. 2016, pp. 291-297.

[4] Esman M., Diasporas in the contemporary World, Cambridge, Polity Press, 2009, p. 9.

[5] Anderson B., Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism, London. Verso, 2006.

[6] Էթնոգենեզի վերաբերյալ տեսություններից պրիմորդիալիզմը հենվում է կենսաբանական գործոնների, ֆիզիկական հատկանիշների՝ մաշկի գույն, ռասսայական պատկանելություն և մշակութային որոշ ատրիբուտների վրա՝ պատմություն, լեզու, առասպելներ, խոհանոց, սովորույթներ, բանահյուսություն ևն: Ինստրումենտալիստական մոտեցման համաձայն էթնիկ խմբի հետ նույնականացումը և հավաքական ինքնության պահպանումը նպատակահարմար է գործնական անհատական և խմբային նպատակների հասնելու համար: Հոգեբանական և էթնոսիմվոլիկ մոտեցումների համաձայն՝ խմբի ինքնությունը հենվում է սուբյեկտիվ հոգեբանական գործոնների և սիմվոլներին, առասպելներին ուժգին կապվածության վրա: Scheffer G., Diaspora Politics: At Home Abroad. Cambridge: Cambridge University Press, 2003, p. 17-18.

[7] Նույն տեղում, էջ 26:

ցային Այլերը»[1]: Լիբերալ երկրներում գործում են որպես էթնիկ լոբբի և բազմամշակութային արտաքին քաղաքականության պաշտպաններ: Նրանք ձգտում են դեմոկրատացնել հայրենիքի ավտորիտար ռեժիմը և գլոբալ տնտեսության մեջ այնպիսի ուժ են, որը աջակցում և փոխում է հայրենիքի տնտեսությունը: Սփյուռքները խթանում են անդրազգային կապերի ստեղծումը, գործում են որպես միջնորդներ հայրենիքի և ընդունող երկրի հասարակությունների միջև, փոխանցում են բազմակարծության և ժողովրդավարության արժեքները, ինչպես նաև այն ձեռնարկատիրական ոգին ու հմտությունները, որոնց պակասը զգում է հայրենիքը[2]: Սփյուռքների քաղաքականությունը ունի ազգի բազմաթիվ հատվածները աշխարհի տարբեր վայրերում մոբիլիզացնելու հնարավորության առավելությունը: Ընդ որում, առաջադրված մի շարք քաղաքական խնդիրներ (հիմնադրամների ստեղծում, հանրային կապեր, լոբբինգ) կարող են լուծվել մի վայրում, մի շարք իրողություններ (ընտրական կամ ռազմական քարոզչություն, զանգվածների մոբիլիզացում) կարող են տեղի ունենալ մեկ այլ վայրում[3]:

Սփյուռքների օգնությունը կարող է կենսական լինել ազգակերտման և պետական կոնսոլիդացիայի համար, միևնույն ժամանակ նրանք կարող են դեր ունենալ այն գործընթացում, որը Ս. Հանթինգթոնը անվանել է «քաղաքակրթությունների բախում», կարող են նույնիսկ ծավալել առկա կոնֆլիկտը՝ ներմուծելով այն ընդունող երկիր կամ զբաղվելով միջազգային հանցագործությամբ և ահաբեկչությամբ: Հայրենիքը կարող է ընկալել սփյուռքը որպես իր ժողովրդի լեգիտիմ մաս, սակայն այնուամենայնիվ մերժել նրա միջամտությունները զգայուն կամ առանցքային, մասնավորապես դեռևս չլուծված կոնֆլիկտներին առնչվող հարցերում[4]:

Հենվելով պատմության ընթացքում տարբեր սփյուռքների օրինակների վրա՝ Մ. Էսմանը փորձել է գտնել որոշ օրինաչափություններ, առանձնացնել գործունեության, ակտիվության այն տեսակները, որոնցով սփյուռքները ազդում են միջազգային հարաբերությունների վրա: Նա առանձնացրել է այդպիսի ինը գործունեություն.

1. Շատ սփյուռքյան համայնքների անդամներ՝ հատկապես նրանց սերունդները, պահպանում են անդրազգային գոյություն: Ֆիզիկապես և զբաղվածությամբ գտնվելով ընդունող երկրում՝ նրանք սոցիալականացման և մշակութայնացման առումով մնում են հայրենիքում, որը թողել են ետևում: Նրանք լսում են հայրենիքի ռադիո հաղորդումները, համացանցում հետևում են թերթերին և ամսագրերին, սերտ կապ են պահպանում ազգականների և ընկերների հետ, հաճախակի այցելում են հայրենիք, կատարում են դրամական փոխանցումներ իրենց ընտանիքներին, հետևում են քաղաքական և մարզական իրադարձություններին, աջակցում են իրենց նախընտրելի կուսակցություններին կամ թեկնածուներին և այն երկրների դեպքում, որոնցում հնարավոր է, մասնակցում են ընտրություններին: Օրինակ՝ Իսրայելում մի շարք ռուս ներգաղթյալներ անմիջապես ստացան քաղաքացիություն, բայց այնուամենայնիվ, պահեցին նախկին խորհրդային երկրներում գտնվող իրենց բնակարանները: Պաղեստինյան սփյուռքի անդամները՝ Սիրիայի և Լիբանանի փախստականների ճամբարներում, զրկված լինելով այս երկրներում քաղաքացիություն ստանալու իրավունքից, փայփայում են վերադարձի հույսը՝ դեպի տներ, որոնք նախնիները թողել են ետևում 1948-ին և 1967-ին: Հարավարևելյան Ասիայի կենտրոնական քաղաքներում տեղակայված չինացիները ունեն առևտրային, ֆինանսական և արտադրական ընկերություններ, որոնք գերիշխող դիրք ունեն տվյալ

[1] Tölölyan Kh., The Nation-State and its Others: In Lieu of a Preface. Diaspora, 1991, 1 (1), p. 3-7. Shain Y., Aharon B., Diasporas and international relations theory, International Organization, Vol. 57, Summer 2003, pp. 449-479.
[2] Shain Y., Aharon B., Diasporas and international relations theory, International Organization, Vol. 57, Summer 2003, pp. 449-479.
[3] Lyons T., Mandaville P., Diasporas in Global Politics, Center For Global Studies, June 2010, Policy Brief. pp. 1-6.
[4] Shain Y., Aharon B., Diasporas and international relations theory…, pp. 449-479.

շրջանի տեղական մասնավոր սեկտորի նկատմամբ: Նրանց գործունեությունը չի սահմանափակվում իրենց շրջանով, այլ անցնում է դեպի Հարավային Ասիա, Ամերիկա[1]:

2. Սփյուռքները կարող են փորձել ուղղակի գործողության միջոցով ներազդել ծագման երկրի իրադարձություններին: Այսպիսի միջամտությունների փորձերը կարող են լինել ի աջակցություն կամ ի հակադրություն իշխանության: Այս միջամտությունը կարող է ներառել զենքի մատակարարում, դրամական միջոցներ կամ մասնագիտական ռեսուրսներ: Այսպես, չինական սփյուռքը ֆինանսավորեց 1911 թ. այն ապստամբությունը, որը գահընկեց արեց Չինաստանը երկուսուկես դար ղեկավարող կայսերական Ցին դինաստիան՝ սկիզբ դնելով Սուն Յաթ-Սենի հանրապետական կառավարությանը:

Անվտանգ լինելով ընդունող երկրում՝ սփյուռքները կարող են նպաստել կոնֆլիկտի շարունակականությանը հայրենիքում՝ հաճախ աջակցելով հայրենիքի քաղաքական դաշտի ամենածայրահեղական տարրերին, այն դեպքում, երբ նրանք ովքեր բախվում են կոնֆլիկտի իրականությանը, ավելի հակված են փոխզիջման: Մեծ Բրիտանիայում, Կանադայում և ԱՄՆ-ում գտնվող Թամիլի համայնքները Շրի Լանկայում ընթացող երկարատև քաղաքացիական պատերազմի ժամանակ ֆինանսավորել են Թամիլ Էլամի ազատագրման վագրեր խմբավորման զենքի ձեռքբերումը: Այս արյունոտ կոնֆլիկտը փոխզիջման տանելու հարցում միջազգային միջնորդությունը ձախողվեց, իսկ գործադրված դաժան միջոցների պատճառով՝ ներառյալ երեխաների զինվորագրումը, ԱՄՆ-ն և այլ արևմտյան պետություններ, Վագրերին որակեցին իբրև ահաբեկչական կազմակերպություն: Սա օրինակն է սփյուռքի կողմից հայրենիքի ռազմատենչ տարրերի աջակցության՝ ընդեմ միջազգայնորեն ճանաչված պետության:

3. Սփյուռքները փորձում են ազդել ընդունող երկրի կառավարության կամ միջազգային կազմակերպությունների վրա՝ գործելու հոգուտ կամ ընդեմ հայրենի երկրի կառավարության շահերի: Որոշ սփյուռքյան համայնքներ Միացյալ Նահանգներում ունեն գրասենյակներ, որոնք հետևում են ԱՄՆ կառավարությունում ընթացող իրադարձություններին, որոնք կարող են բարենպաստ կամ անբարենպաստ լինել Միացյալ Նահանգներում իրենց հայրենակիցների կամ հայրենիքի շահերի համար: Նրանք պատրաստ են միջամտելու կամ քաղաքականապես ակտիվացնելու իրենց սփյուռքյան համայնքը, երբ իրենց շահերը վտանգվեն ԱՄՆ Կոնգրեսի կամ կառավարության կայացրած որոշման պատճառով[2]: Կուբայի սփյուռքը Միացյալ Նահանգներում մի քանի տասնամյակ շարունակ կոչ է արել Վաշինգտոնին Ֆ. Կաստրոյի կոմունիստական ռեժիմի նկատմամբ պահելու կոշտ քաղաքականությունը՝ ներառյալ տնտեսական էմբարգոն[3]: ԱՄՆ-ում լոբբիստական բազմաթիվ խմբերը, որոնք ձգտում են ազդել կառավարության դիվանագիտական, տնտեսական և անվտանգության քաղաքականության վրա՝ ի շահ իրենց հայրենիքի, փաստարկում են, որ իրենց հայրենիքին (Ուկրաինա, Լեհաստան, Մարոկկո, Ֆիլիպիններ, Պակիստան, Թայվան ևն) աջակցելը ոչ միայն բարոյապես տեղին է, այլև լիովին համատեղելի ամերիկյան ազգային շահի հետ[4]:

Պահպանելով կապվածության զգացումը հայրենիքի հանդեպ՝ սփյուռքները ձգտում են բացի դրամական փոխանցումները, կատարել նաև ուղղակի ներդրումներ և տեխնիկական աջակցություն ցուցաբերել հայրենիքի տնտեսական զարգացմանը: Սփյուռքի չինացիները եղան հետմաոիստական Չինաստանի արդյունաբերության մոդեռնիզացման խոշոր ներդրողները: Հյուսիսային Ամերերիկայի հնդիկները օժանդակեցին Հնդկաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերություններին կապեր հաստատելու ամերիկյան այն ընկերությունների հետ, որոնք հետաքրքրված էին Հնդկաստանի ընդլայնվող համակարգչային արդյունաբերությամբ[5]:

---

[1] Esman M., Diasporas in the contemporary World, Cambridge, Polity Press, 2009, pp. 121-122:

[2] Վաշինգտոնում ամենահաջող լոբբինգ իրականացնողները հետազոտողների գնահատմամբ հրեական, հունական, հայկական և կուբայական լոբբիստական կազմակերպություններն են:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 124:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 126:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 125:

4. Հայրենիքի կառավարությունը փորձում է օգտագործել սփյուռքը ի շահ իր ռազմավարական կամ տնտեսական նպատակների: Բանկային և այլ ուղիներ ստեղծելու միջոցով մեծացվում են ֆինանսական փոխանցումների հոսքերը սփյուռքից դեպի հայրենիքում գտնվող ընտանիքներին և ընկերներին: Մեքսիկան, օրինակ, տարեկան ստանում է 20 բիլիոն ամերիկյան դոլար իր՝ ԱՄՆ-ի սփյուռքից: Պետականորեն խրախուսվում է որպես տուրիստ Մեքսիկա այցելելը և առատաձեռնորեն ծախսելը: Քանի որ Մեքսիկայում ընտրություններին մասնակցելու իրավունք ունի նաև սփյուռքը, թեկնածուները ակտիվորեն քարոզարշավ են իրականացնում Ամերիկայի մեքսիկացիների շրջանում:

Որոշ երկրներ, հատկապես Կորեան, Չինաստանը, Հնդկաստանը, փորձում են շրջել ուղեղների հոսքը՝ բարձր տեխնոլոգիաների և գիտության բնագավառում փորձ ու հմտություններ ձեռք բերած սփյուռքի իրենց հայրենակիցներին վերադարձնելու, որպեսզի իրենց գիտելիքներով նպաստեն հայրենիքի արդյունաբերության, կրթության, առողջապահության, բանակի մոդեռնիզացմանը: Կորեան հիմնել է բարձր կարգի գիտական և հետազոտական ընկերություն, որի աշխատակազմը հիմնականում բաղկացած է Ամերիկայի սփյուռքից վերադարձածներից իսկ վարձատրությունը համարժեք է ԱՄՆ-ում նրանց վաստակածին[1]:

5. Ճնշման ենթարկված սփյուռքը կարող է պաշտպանություն ակնկալել հայրենիքի կառավարությունից: Երբ 1970-ականների վերջին Վիետենամի չինական սփյուռքը հալածվում էր վիետնամական կառավարության կողմից, Չինաստանը չսահմանափակվեց բողոքելով, այլ սկսեց պատժիչ ռազմական արշավ Վիետնամի դեմ: Այնուամենայնիվ, սա հազվադեպ է, և սովորաբար, երբ նմանատիպ իրավիճակներում է սփյուռքը օգնություն ակնկալում հայրենիքից, չի ստանում: 1978 թվականից հետո, երբ Պեկինը ընդգծեց Հարավարևելյան Ասիայի երկրների հետ իր բարեկամական հարաբերությունները, հրաժարվեց նախկին քաղաքականությունից՝ բոլոր էթնիկ չինացիներին՝ անկախ բնակության երկրից, դետելու իր կառավարության պատասխանատվության ներքո: Աշխարհասփյուռ չինացիներին Պեկինը հորդորեց դառնալ բնակության երկրի լավ քաղաքացիներ: 1997-1998թթ., երբ չինացիները ջարդերի էին ենթարկվում Ինդոնեզիայում, որևիցե օգնություն չեղավ Պեկինից: Նմանապես, երբ Ուգանդայում հնդկական սփյուռքը զրկվեց ունեցվածքից և արտաքսվեց, դիմեց հայրենիքի օգնությանը, սակայն Հնդկաստանի կառավարությունը իր ճնշվող սփյուռքին օգնելուց առավել կարևոր համարեց այլ պետության ինքնիշխանությանը չմիջամտելու սկզբունքը[2]:

6. Ընդունող երկրի կառավարությունը կարող է դիմել սփյուռքին՝ աջակցելու իր ռազմավարական և տնտեսական նպատակներում: Ընդունող երկրին իրենց հավատարմությունը ցուցաբերելու համար սփյուռքները առավել քան պատրաստակամ են լինում այս հարցում: Իտալիայում 1948 թվականի վճռորոշ ընտրությունների ժամանակ ԱՄՆ-ի կառավարությունը դիմեց Ամերիկայի իտալացիներին՝ Իտալիայում գտվող իրենց ընտանիքի անդամներին և ընկերներին կոչ անելու, որպեսզի քվեարկեն հակակոմունիստական թեկնածուների օգտին: Այս քարոզչությունը պսակվեց հաջողությամբ:

Մալազիայի կառավարությունը դիմել է երկրում գտնվող չինացիներին, որպեսզի օգտագործեն իրենց կապերը՝ մեծացնելու արտահանումների հոսքը դեպի չինական շուկա: 2003 թվականին սկսված իրաքյան երկրորդ արշավի ընթացքում ԱՄՆ-ն արաբաամերիկյան սփյուռքից հավաքագրեց այն մեկնաբաններին և թարգմանիչներին, որոնց կարիքը խիստ զգացվում էր:

Մյուս կողմից սակայն, ընդունող երկիրը սփյուռքին կարող է համարել կասկածելի, երկակի հավատարություն ունեցող և, նույնիսկ, անհավատարիմ՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում: Օրինակ, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Կանադայում ուկրաինացի երիտասարդ տղամարդիկ՝ որպես օտարներ և թշնամիներ, եղել են համակենտրոնացման ճամբարներում, օգտագործվել ծանր աշխա-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 127:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 128-129:

տանքներում, թեև նրանք որևիցե զգացական կապվածություն չեն ունեցել Ավստրո-հունգարիայի հետ, որդի դեմ պատերազմում էր Կանադան: Համաշխարհային պատերազմի ընթացքում ԱՄՆ-ում Ճապոնացիները նույնպես եղել են համակենտրոնացման ճամբարներում, չնայած որ նրանց կողմից չի եղել վնասակար կամ անհավատարիմ գործողություն[1]:

7. Սփյուռքը նպաստում է հայրենիքի քաղաքական, կրթական և տնտեսական զարգացմանը: Այսպիսի օգնությունը կախված է սփյուռքյան համայնքների կարողություններից և հայրենիքի կառավարության պատրաստակամությունից և կարողությունից՝ ընդունելու այդ օգնությունը: Իսրայելի ազդեցիկ համալսարանների հիմնական ենթակառուցվածքները ֆինանսավորվում են հրեական սփյուռքի կողմից: Փաստացի, յուրաքանչյուր կառույց կրում է հյուսիսամերիկյան հրեա հովանավորի անունը: Իսրայելի համալսարանները պահում են գրասենյակներ Հյուսիսային Ամերիկայում դրամահավաքի նպատակով: Մյուս կողմից, օրինակ՝ հայ սփյուռքը տրամադրված է եղել բարեգործական աջակցության իրականացմանը, քան Հայաստանի տնտեսության մեջ ուղիղ ներդրումներ կատարելուն՝ պայմանավորված բացասական բիզնես մթնոլորտով[2]:

Խորհրդային Միության փլուզումից հետո հետխորհրդային երկրների սփյուռքները տեղի գործընկերների հետ համագործակցությամբ կատարեցին դեմոկրատացման բարեփոխումներ. քաղաքագետները նախագծեցին նոր սահմանադրություններ, ընտրական օրենքներ, իրավաբանները ներգրավեցին դատական համակարգի բարեփոխումներում, լրագրողները նպաստեցին ազատ մամուլին, տնտեսագետները խթանեցին շուկայական տնտեսության բարեփոխումները[3]:

8. Հայրենիքի կառավարությունը իր սփյուռքի կողմից թշնամական գործողությունները զսպելու նպատակով կարող է դիմել ընդունող երկրի կառավարությանը: Անկարան խնդրել է Բեռլինին արգելափակել քրդական սփյուռքից դրամական միջոցների և զենքի հոսքը դեպի Թուրքիայի հարավարևելք՝ քուրդ ապստամբներին: Շրի Լանկան քաղաքացիական պատերազմի ընթացքում դիմել է Բրիտանիային արգելափակելու դրամական միջոցների հոսքը թամիլական սփյուռքից թամիլ ապստամբներին: Բրիտանիան կոչ է արել Վաշինգտոնին արգելափակելու ԱՄՆ-ի իռլանդական սփյուռքից դրամական միջոցների և զենքի հոսքը դեպի Իռլանդական հանրապետական բանակ: Այսպիսի կոչերը, սակայն, դրական արձագանք ստանում են այն դեպքում, երբ սփյուռքը ընդունող երկրում նույնպես դիտվում է իբրև անվտանգությունը վտանգող: Նշված օրինակներում ընդունող երկրի կողմից նման մտահոգություն չի եղել[4]:

9. Ներկայումս բռնի գործողությունների սպառնալիքը՝ ահաբեկչական կազմակերպությունների կողմից, որոնցից շատերը կապված և ներշնչված են Ալ Քաիդայից, կասկած են նետում որոշ սփյուռքյան համայնքների վրա: Արևմուտքի մասնագետները համարում են, որ ահաբեկչական գործողություններից շատերը ծրագրված է և վերահսկվում է անդրազգային կազմակերպությունների կողմից, որոնք ապահովում են գաղափարախոսություն, ուսուցում, մատակարարներ, ֆինանսավորում և ակտիվիստների ներգրավում: Նրանց շարքում են այն մահապարտները, որոնք իրականացրել են ամերիկյան և եվրոպական ամենահայտնի ահաբեկչական գործողությունները[5]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 129-130:

[2] Հայաստանին վերաբերող օրինակը, ինչպես մյուս բոլոր օրինակները, Մ. Էսմանինն է: Օտարերկրյա հետազոտողների ուսումնասիրություններում նույնպես հաճախ է նշվել հայ սփյուռքի կողմից, բացասական բիզնես մթնոլորտով պայմանավորված, փոխանցումների առավելապես բարեգործական բնույթի մասին: Հետհեղափոխական Հայաստանում գործադրվում են ջանքեր՝ փոխելու բիզնես մթնոլորտը, իսկ Սփյուռքի նախարարությունը քաղաքական խոսույթի (դիսկուրսի) մակարդակում և առաջին նախաձեռնության («Ներուժ» ծրագիր) մեկնարկի առումով փորձում է կատարել Սփյուռքի հետ հարաբերությունների անցումը դեպի ներդրումների և փոխադարձ շահի դաշտ: Սկիզբը խոստումնալից է, հուսով ենք նաև՝ գալիքը:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 130:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 130-131:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 131-132:

Մ. Էսմանի կողմից առանձնացված գործունեության տեսակները Յ. Շեյնը և Ա. Բարթը տրոհում են երկու մեծ խմբերի՝ ***ակտիվ*** և ***պասիվ***, որոնք էլ իրենց հերթին բաժանում են միջազգային հարթակում սփյուռքների դերակատարության երեք տիպերի.

1. Սփյուռքները պասիվ դերակատարներ են և միջազգային հարաբերություններում ներգրաված են հայրենի պետությանն առնչվող հարցերի, խնդիրների համատեքստում:

2. Սփյուռքները ակտիվ դերակատարներ են և ազդում են ընդունող երկրների՝ հայրենիքի նկատատմամբ վարած քաղաքականության վրա:

3. Սփյուռքները ակտիվ դերակատարներ են և ազդում են հայրենիքի ներքին և արտաքին քաղաքականության վրա[1]:

Գ. Շեֆֆերը որևէ սփյուռքի քաղաքական օրակարգի ձևավորման համար վճռորոշ է համարում հայրենիքում կամ տվյալ սփյուռքի կողմից հայրենիք դիտվող աշխարհագրական տարածքում ազգային պետության գոյությունը կամ բացակայությունը: Առանցքային համարելով այդ իրողությունը նա տալիս է սփյուռքների դասակարգման իր մոդելը՝ հիմք ընդունելով երկու չափորոշիչ. պետության առկայությունը կամ բացակայությունը և սփյուռքի «տարիքը»: Ըստ այսմ, սփյուռքները բաժանվում են մի կողմից՝ **պետականահենք** և **պետականազուրկ** սփյուռքների, մյուս կողմից՝ **պատմական** (կամ դասական), **ժամանակակից** (կամ արդի) և **ձևավորվող** սփյուռքների[2]:

Պետազականազուրկ սփյուռքները ձգտում են նվաճել ազգային անկախություն: Այդ իմաստով, հայրենիքը և պետականության ձեռքբերումը նրանց քաղաքական կողմնորոշման և ակտիվության ուղղվածության հիմնական առանցքն է[3]: Պաղեստինցիները, քրդերը, սիկհերը, տիբեթցիները այսօր քաղաքականապես ամենաակտիվ պետականազուրկ սփյուռքներն են[4]:

Եթե պետականազուրկ սփյուռքները հաճախ որդեգրում են անջատողական կամ յետադարձական (irredentist) ռազմավարություն (նպատակը՝ հիմնել անկախ պետություն և նպաստել սփյուռքի վերադարձին), պետականահենք սփյուռքները հակված են ընտրելու կոմունալիզմը (նպատակը՝ ձեռք բերել ապահով և հարգված դիրք ընդունող երկրում, միաժամանակ՝ պահպանել ինքնությունը): Այս ռազմավարություններից յուրաքանչյուրի ընտրությունը թելադրում է հավատարմության, ռեսուրսների տեղաբաշխման, կազմակերպվածության, քաղաքական վարքագծի, քաղաքական և սոցիալական այլ դերակատարների հետ հարաբերությունների տարբերություններ[5]: Գլոբալ մակարդակում պետականահենք և պետականազուրկ սփյուռքների տարբերությունը հանգում է նրան, որ ի տարբերություն պետականահենք սփյուռքների, որոնք ջանքերը ուղղում են համայնքի և հայրենիքի հզորացմանը, միաժամանակ դիտվում են հետարդիական, հետազգային, անդրպետական սոցիալական և քաղաքական համակարգի ձևավորման գործընթացում ներգրավվածներ, պետականազուրկ սփյուռքները, սևեռված լինելով հայրենիքում ինքնիշխան պետություն հաստատելու կամ վերահաստատելու գաղափարի վրա, մասնակցություն չեն ցուցաբերում հետազգային գործընթացներում[6]: Հաշվի առնելով պետականահենք և պետականազուրկ տարբերությունները, բայց և հենվելով սփյուռքների միջազգային, միջպետական, քաղաքական, մշակութային, տնտեսական կապերի վրա՝ Գ. Շեֆֆերը սփյուռքները ոչ միայն համարում է հետարդիական անդրպետական քաղաքական համակարգի նախակարապետներ[7], այլև կանխատեսում. «Զարգացումները ցույց են տալիս, որ սփյուռքների և նրանց հայրենիքների օրակարգերի, հետաքրքրությունների և կարիքների միջև ապագայում կլինի պարզորոշ տարբե-

---

[1] Shain Y., Aharon B., Diasporas and international relations theory, International Organization, Vol. 57, Summer 2003, pp. 449-479.
[2] Scheffer G., Diaspora Politics: At Home Abroad. Cambridge: Cambridge University Press, 2003, p. 23.
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 148-149:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 156:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 244:
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 156:
[7] Տե՛ս նույն տեղում, էջ 245.

րակում: Թեև կասկած չկա, որ որևէ ժողովրդի այս երկու հատվածների միջև կշարունակվեն կապերը, այնուամենայնիվ, նրանց՝ մեկը մյուսին հենարան լինելը, ապագայում կնվազի: … Ընդհանուր առմամբ հայրենիք-սփյուռք հարաբերությունների ապագա զարգացումները անդրպետական մակարդակում կգնան դեպի քաղաքականության նոր տեսակի. ինքնավար մարմինների դաշինքի»[1]:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ տեսականորեն արձանագրվում է.

1. լինելով էթնիկական հատկանիշները ընտրողաբար և գիտակցաբար պահպանող և միաժամանակ անցնելով էթնիկությունից անդին՝ սփյուռքները միտում են ցուցաբերում դառնալու շատ ավելի անկախ ու ինքնավար, քան ներկայումս են,

2. սփյուռքի ակտիվությունը կարող է լինել և՛ կառուցողական, և՛ ապակառուցողական, պայմանավորված սուբյեկտիվ և/կամ արժեբանական գործոններով՝ գնահատվել իբրև դրական կամ բացասական,

3. ուրույն կեցվածք, կապեր և հսկայական ներուժ ունեցող սփյուռքյան անդրազգային ցանցը համապատասխան մոբիլիզացիայի դեպքում ենթադրում է լուրջ ազդեցություն և արդյունքներ,

4. համաշխարհայնացման գործընթացում սփյուռքները ցուցաբերում են ոչ միարժեք դերակատարում՝ պայմանավորված պետականազուրկ և պետականահենք սփյուռքների քաղաքական օրակարգերի տարբերությամբ:

Грацин Варданян, Теоретический обзор политической роли диаспоры. В статье рассматриваются некоторые теоретические обобщения касающиеся политической роли диаспор в наше время. Представлены те виды деятельности и активности, которые диаспоры имеют в отношениях с родиной, а также с принимающей страной и на международном уровне. Подчеркиваются тенденции диаспор действовать независимо в этих отношениях. Рассматриваются также некоторые различия в политической активности государственных и негосударственных диаспор.

Ключевые слова: диаспора, политическая роль, государственная и негосударственная диаспора, стратегический и экономические цели, родина, принимающая страна, глобализация.

Hratsin Vardanyan, Theoretical overview of the political role of the Diaspora. The article touches upon some theoretical generalizations concerning the political role of diasporas nowadays. It presents those types of activity and activeness which diasporas show both in the relationships with homeland and with a hostland and on international platform. Underlined are the tendencies by diasporas to act more independently in those relationships. It also touches upon some differences of political activeness of statelinked and stateless diasporas.

Key words: diaspora, political role, statelinked and stateless diaspora, strategical and economical aims, homeland, hostland, globalization.

[1] Նույն տեղում, էջ 248: